ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

Ընդհանուր և սպասարկման կազմակերպման բաժին

N 2788 23 MAR 2017 ժամ 12:30

«23» մարտի 2017թ. No 928-Ա

Կից ☐

Նշումներ

Դեղի նպատակային ծրագիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԴԵՂԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 25-ի N 347 որոշման 17-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը և հիմք ընդունելով «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի N 0301049217 առ. 17.03.2017թ. գրությունը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել թվով 1 դեղի գրանցման հավաստագրի վերաձևակերպումը՝ համաձայն հավելվածի:

2. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Հ. Թոփչյանին՝

1) հնգօրյա ժամկետում ապահովել դեղի վերաձևակերպված գրանցման հավաստագրի ներկայացումը ՀՀ առողջապահության նախարարություն.

2) սահմանված ժամկետում ապահովել սույն հրամանի 1-ին կետում նշված դեղերի վերաձևակերպված գրանցման հավաստագրերի տրամադրումը հայտատուներին՝ որպես վերաձևակերպված հավաստագրի ուժի մեջ մտնելու ժամկետ նշել սույն հրամանի տրման օրը.

3) մինչև յուրաքանչյուր ամսվա 5-ը ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում) ներառելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարություն ներկայացնել նախորդ ամսվա ընթացքում պետական գրանցում ստացած դեղերի ցանկը:

23.03.17 12:30

ԼԵՎՈՆ ԱԼԹՈՒՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ առողջապահության նախարարի
2017 թվականի մարտի 23 – ի թիվ 928 – Ա հրամանի

ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԶԵՎԱԿԵՐՊՈՒՄ

հ/հ	Առևտրային անվանումը	միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները	դեղաձևը	դեղաչափը և թողարկման ձևը (փաթեթավորումը)	արտադրող ֆիրման	երկիրը	գրանցման հավաստագրի իրավատեր	Բաց թողման կարգը	եզրակացու-թյան համարը
1.	Յոդբալանս	կալիումի յոդիդ	դեղահատեր	100մկգ; (100/4x25/) բլիստերում	Մերկ ԿԳաԱ, Ֆրանկֆուրտեր Շտրասե 250, 64 293 Դարմշտադտ	Գերմանիա	Մերկ ԿԳաԱ, Ֆրանկֆուրտեր Շտրասե 250, 64 293 Դարմշտադտ, Գերմանիա	ԱԴ	13901